ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ամենայն Հայոց Հայրապետ Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոսը, հրավերովը Մոսկվայի և համայն Ռուսաստանի Տ. Ալեքսի սրբազան պատրիարքի, 1968 թ. դեկտեմբերի 21-ին Զագորսկի ռուսական մայրավանքում, մասնակցեց միջեկեղեցական խորհրդակցական ժողովին, որի օրակարգն էր՝ եկեղեցական մի համագումարի հրավիրումը, քննելու համար աստվածային պատգամների լույսի ներքո, աշխարհում խաղաղությունը ամրապնդելու գործում՝ եկեղեցիների և այլ կրոնական դավանությանց մասնակցության հարցը:

Սույն խորհրդակցական ժողովին ներկա էին Խորհրդային Միության մեջ քրիստոնեական բոլոր եկեղեցիները, ինչպես նաև՝ մահմեդական, մովսիսական և բուդդայական դավանությունները:

Ժողովում միաձայնությամբ որոշվեց վերոհիշյալ օրակարգով կրոնական համագումար հրավիրել 1969 թվականի հուլիսի 1—4 օրերին Զագորսկի մայրավանքում՝ մասնակցությամբ Խորհրդային Միության մեջ բոլոր եկեղեցիների և կրոնական դավանությանց, ինչպես նաև արտասահմանից հրավիրված կրոնական-եկեղեցական ներկայացուցիչների:

25 դեկտեմբեր 1968 թ.
Ս. Էջմիածին

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ